

Մագյարդարից սառուցիկ խօլութիւնները ցրուէ,
Որ կը գրգռեն գիշերով, հիւծած մաշած տարւ-
[փանքներ:

Արթնցուր մութ տեղերուն մէջ զլինկայր աշ-
[խարհաց
Թափառական ու թմրած հրէշտակներու հոգի-
[ներն.

Կրակէ՛ սպառած ոգիները փոքրերուն արհամարհ
Նըշոյլներով հըզօր՝ իբր օրհարսակի փողեր բոց.

Միահենծան հրդեհիչ հաստատութեան սառնապաղ
Բոլոր երկիրը վառէ հրդեհումով մը զըւարթ:

Այրէ՛ քուրջներն ու զրգլեակը, խնշրանքն ու
[ծոպերն,
Գաղջը որ խոր կը ննջէ, եւ երկնշոտն որ կու լայ:

Ձերզ անսահման խաբոյկի մը մէջ՝ զօհի համար
[վառ՝
Ձնջէ ամէն դիրտ եւ աղտ մարդկային նննգ չա-
[րութեան:

Որ զի Աղամը դարձած սրբանըւէր հրդեհէն
Կարող ըլլալ տեսնելու զԱստուած երես առ երես:

Յ Ո Ւ Լ Ի Ս

Երիտասարդ Յուլիսի շէկ երկնքում
Տաք դաշտորան կը ճոխանայ սիգապանծ:

Կը թուի անտառ մը որ եւ է փոքրը թուփ,
Եւ դիրաբեկ բունը կազնի մ'հինաւուրց:

Աւելի՛ եւըս սուր կարծես կը հնչէ
Հորթին պոչիւնը եւ հաշիւնը քածին,

Եւ իբրեւ լին մը կը փայլի փոքրիկ փոսն
Ուր քիչ մը շուր կը մօրանայ կանաչուն:

Երիտասարդ յուլիսի շէկ երկնքում
Սիրահարուած է բոլոր պիւրճ դաշտորան:

Կը վառվըռի նաեւ իմ սիրտս արեւում
Լայնածաւալ պարզութեան մէջ ըսփոփուած:

Կը համբուրուին մըտածումներն ու բնութիւն
Եւ կ'առնեն յանկարծ հին խօսքերը մարմին.
Կը դառնայ խնդն որուն հոգին կը տննչայ

Եւ կու տայ նւս հըզօր կընիք մ'աշխարհի,
Խոտեր՝ լեռներ են դստրիկներ Աստուծոյ
Կայրածաւալ շերմութենէն քոյրացած:

Նաեւ իմ սիրտս կը վառի արեւում
Լայնածաւալ տաքութեան մէջ հաշտուած:
Թրգմ. Հ. Ա. ՂԱԶԻՅԵԱՆ

ԽԱԽԱՐԱԾ ԱՍՏՆԻՍ

(Վաղամեռի ընկերիս յիստօյիմ)

Երվի ափին տըխրադէմ
Մահու պատկերն ծա տեսայ.
Աստղիկ մ'երկնից բարձունքէն
Ցած էր ինկած անըզգայ:

Անաթորմի ժեռին մօտ
Կը հեծէր դէմք մ'ալեւոր
Որ արցունքով մահահոտ
Պատմից աղէտն անաւոր:

Չափեցի՞ ծիրն երկընքին
Այն իրիկուն՝ վըշտահար.
Աստղերն ամէն՝ կու լային
Աստղիկս ամբիծ որ չի կար:

Ու յիշեցի գեղն ամբիծ
Երբ կը ճեմէր երկնից ծոց,
Ու նազանքով սիրալից
Հազար սրտի սէրն էր, բոց....

Սիպտակ, անմեղ զերզ շուշան
Ամէն այգուն կը ծագէր,
Ամբիծ սրտին՝ լուսընկան
Գիշերն հըսկող ու ընկեր:

Լոյս էր անի, բարձունքէն
Կարեկցութեան ժըպիտով
Մահացունքն հէք ամէն
Կը դիտէր սիրտը վըրդով...

Ու սիրեցի այդ հոգին
Անմեղութեան նախանձով.
Ինչպէս իր աստղն երկընքին
Անհունին մէջ, սերոյ ծով....

Անող, պատրանքը յահուր
Ձինքն ըզզըլխեց անբարբառ.
Անընչացաւ գետակուր,
Պատեց իր աստղն ալ խաւար...

Անցաւ անբաստ այն գիշեր,
Գեոտին ափին դին զըտան.
Մագեցաւ այգն աննըւէր
Երվի ափին էր աստղն այն....

Երանութեան դիւթանքն հեշտ
Իր սրտին մէջ մարեցաւ.

Սուգեց անդունդը զինք շնշա:
Ունայն Ոգին անիրաւ:

Ու ցընդեցան յոյսերն իւր
Ինչպէս այգուն շամանդաղ,
Ու սրտիս մէջ ալ տըխուր
Սիրոյն ցոլեցին իւր, աւաղ....

Երովի ափին տըխրադէմ
Մահու սըգով ես լացի,
Աստղիկս երկնից բարձունքէն
Ցած էր ինկած անհոգի:

Հ. ԵՂՈՒ ՓԵՏԻՍԵԱՆ

Ն Ե Ր Ք Ի Ն Մ Ե Հ Ե Ա Ն Ը

ՎԵՐԿԵՆՑԱՂՈՒՄ

Վերկենցադուռն անակնկալ կարծրօրէն
Մարմարագեղ, զերդ արձանի մը հոգին,
Իմ սրտիս մէջ՝ հին օրերու պատրանքին,
Ինչ քաղցրութիւն, շողն այս մարմն արեւն...

Տարբալուծել անկապ վառ պրիմալով,
Ու ծիածանը բռնել դէմ խաւարին.
Գտնել ազօթք մը դարօրէն ցնորային,
Որ գայ աստուած մը վիրաւոր սրտիս քով...

Յոյսին դարձող Որբութիւնն եմ հոգիին
Դեռ կը մըսի լուսնի ձիւնէն. կարելին
Արդեօք չ'ըրի՞ որ Հայրութիւն մը կանչէր...

Քայց ես տրդա՞յ մ'եմ հունձքին մէջ երազին,
Ու սոսկ որայ մը տրտմօրէն կապեցին
Ձեռքերս օծուած լոյսին դողովն արփաշէր

ՕՐԸ

Այս աղուոր, անգուշակ, այս տրտում
Օրը դեռ հոգիիս պարտեզին
Երազին է. միակ վարդը ժպտուն
Ուր ցօղի կաթիլներ կը մըսին.

Կը յիշէ գուցէ օրն այս, Եկուոր
Մը որուն ո՛չ մէկ տուն կը սպասէր,
Որ սրտիս խորհուրդին մէջ անտէր
Ընդգոգեց իր ըստուերն հեշտօր...

Կը հիւսէ գուցէ օրն այս երբեք
Ձ'երազուած կախարդանք մը զադանի,
Մանկութեան լոյսին պէս, երբեմնի
Շո՞ղ մարած սրտիս մէջ յուսաբեկ...

Ու չ'եղած իրիկունը տրտում,
Այնքան բոյր, այնքան երգ, այնքան սէր
Հոգիիս՝ որ անոր կը սպասէր,
Օրն այն շինջ, անգուշակ է ժպտուն...

ԳԻՇԵՐ

Կարապին որբ երգը չէ՞ր, — Թէ՛ լրտութեան,
Որ ծանրացաւ միայն կաթիլ՝ մ'արցունքով.
Երաւսօրէն կը խոնարհի՞ տրտմաթով
Իմ հոգիիս աղբիւրին վրայ լուսնկան...

Ըստուերին մէջ քանդակուած լոյսն, արծաթեայ .
Շուշան, քաղէ՛լ մատնիրով շինջ, դալկահար,
Յանկարծ յառնող Յիշատակի մը համար
Որուն ժըպիտն հոգւոյս մութին մէջ կ'իյնայ...

Ո՞վ տարիներս արեւային, ձեզ նորէ՞ն
Համբել, մէկէն մինչեւ տարին, երբ դարձեալ
Արեւի բոց մը լուսայեղ, ոսկեկայլ
Ձեր Առաւօրը ծաղկեցուց խաւարէն...

Գիշերն հիմայ կարապին Ծր երգին հետ...
Ո՞վ քաղեց լոյսը մարմարէ պարտեզէն,
Յայգաժամին մատներն անվերջ կը հիւսեն
Ունայն պըսակն երազներուս տրտմաւետ...

ԱՆԴԱՐՁՈՐԷՆ ՎԼՃԻՏՈՐԷՆ

Անգարծօրէն, վընիտօրէն ու տրտմօրէն
Մեկնող ըստուերն այս օրուան, խոնջ այս արեւն
Գուցէ միակ անհուն խորհուրդն էր անուրջի,
Հէ՞ք որբ տըղայ, որուն ես գուռը չի բացի...

Կանչե՞ք արդեօք: Լըռութիւնն էր շրջապատող,
Եւ յետադարձ, երգի մը պէս որ կը յիշէ,
Ճրագը որուն կը ժպտի բոցը լուսաշող,
Իր կրկնելող երևոյթին ակն էր գուցէ...

Դեռ կը սպասեմ իր տեսիլքին: Ինչ քաղցրութիւն
Այս վիշտին մէջ ուր կ'արբենայ հոգիս տրտում.
Իր աղբիւրին դարձող ջուրին պէս երգեցիկ.

Մեկնող ըստուերն այս օրուան, խոնջ այս արեւն
Կը պարուրուի իր մերկութեան մէջ թափանցիկ,
Հեռակարօտ, ու սըգաւոր անյուսօրէն...

ԱՐՄԷՆ-ԻՐԱՆ